

Հ. ԱՌԱՋՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք Է.

37. ԲՈՒԶԱՆԴ ՓԱՎՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

1907 թվին, Փարիզի «Իստասեր» հանդեսում հրատարակեցի մի աշխատություն, որի վերնագիրն է «Ձեռագրական սրբագրություններ Փավստոսի մեջ»: Կա նաև սրա առանձին արտատպությունը (64 էջ):

Այստեղ խոսում եմ նաև այն մասին, թե Իուզ. Դ դար. գլ. ԺԶ, հրար. Պատկ. էջ 107, առդ 9-11 մի մեծ թերույթ կա:

Հատվածը հետևյալն է.

«Կամեցաւ խանգար առնել ի մէջ Արշակայ թագաւորին Հայոց և փախչել || այլ ասէր Շապուհն թէ ձեր սրտի մտօք էր տուեալ զերզումն ևն:

Որպեսզի պարզ լինի թերույթի հանգամանքները, պատմում եմ համառոտով այն՝ ինչ որ պատմւում է Բուզանդր մինչև վերոհիշյալ հատվածի երկգծիկով բաժանված մասը:

Արշակը այցելության է գնում Շապուհին, որ սիրալիր ընդունելություն է ցույց տալիս. պատահում է միայն փոքրիկ մի միջադեպ. Շապուհն ախոռապետը (սարակալ, կարգա սառակալ, տես՝ Արմ. բո. է. 182) անարգում է Արշակին. աներկյուղն Վասակ տեղնուտեղը սպանում է նրան. Շապուհը վարձատրում է Վասակի քաջությունն ու տիրասիրությունը: Այնուհետև Շապուհը և Արշակը սիրո դաշինք են կնքում. Շապուհը կանչում է Տրսպոնի երեցներին և նրանց ձեռքով երգում տալիս Արշակին՝ Ավետարանի վրա: Շապուհը շատ է ուրախ այս դաշնադրության վրա. ուստի առանձնապես պատվում է Վասակի եղբայր Վարդանին, որ միջնորդ էր եղել երկու թագավորների միջև: Վասակը նախանձում է և ուզում է դաշինքը խանգարել:

Երկգծիկից հետո նյութը հանկարծ փոխվում է. — Շապուհն է, որ խոսում է Տրսպոնի երեցների հետ, կասկածում է, որ նրանք սուտ են երգում տվել Արշակին, և բուրբին կոտորում է. պարզ է, որ մի խոշոր պակաս կա այստեղ: Պակաս մասի նյութը հետևյալն է. Վասակը համոզում է Արշակին և երեւի չարախոսելով Շապուհնի մասին՝ պատճառ է դառնում Արշակի փախչելուն: Շապուհը լսելով Արշակի փախուստը և կանչելով Տրսպոնի երեցներին, մեղադրում է նրանց, որ նենգությամբ են երգում տվել և խաբել Շապուհին: Երեցների գլխավորը (Մարի) պատասխանում է. «Մենք արդարությամբ երգում տվինք. իսկ եթե նա ստեց Ավետարանին, նույն Ավետարանը դարձյալ նրան քո ղոտքը կրերի»: Մնացյալը տեսնվում է ԺԶ գլխի շարունակության մեջ: Պակաս մասի այս բովանդակությունը երևում է նախ ԺԶ գլխի ընդարձակ խորագրից «Թէ զիարդ ստեաց յետոյ (Արշակ) և փախեաւ», երկրորդ՝ հաջորդ գլուխների պատմությունից, և մանավանդ

երրորդ՝ ԾԴ գլխի առաջին մասից, ուր Շապուհ թագավորը (30 տարի հետո) ընդարձակ կերպով մեջ է բերում այս պատմությունները, իբրև հին հիշողություններ:

Տեղնուտեղը ստուգելու համար մեր ձեռագրերի գրությունը, դիմեցի մեր Պետական Մատենադարանը: Ձեռագիրների հմուտ մասնագետ ընկ. Լևոն Խաչիկյանը իր սիրալիր պատրաստականությամբ վայրկենապես բերեց ինձ Բուզանդի բոլոր ձեռագիրները: Դրանք թվով 7 հատ են և կրում են հետևյալ համարները № 1185, 1482, 1867, 3071, 3079, 4584 և 8813: Առաջինը և վերջինը թերի լինելով՝ չէին պարունակում մեղ հետաքրքրող հատվածը, քննեցի մյուս հինգ օրինակները և գտա, որ ոչ մի փոփոխություն չեն մտցնում տպագրյալ բնագրի մեջ:

Այսպիսով, ուրեմն, ստուգվեց, որ թերի են մեր բոլոր ձեռագրերը Բուզանդի հիշյալ կետի վերաբերմամբ:

Բայց այս թերությունը մի ուրիշ բան էլ ապացուցեց. այն, որ մեր ունեցած այս բոլոր ձեռագրերն էլ (Վենետիկի, թե Երևանի) բխում են միայն մի նախագաղափար օրինակից և այդ ձեռագրերի ճյուղագրությունը կազմելու և խմբավորելու կարիք չկա:

38. ՍԵ Դ Ա

Այս անվան հնագույն հիշատակությունը 1040 թվից է. Սեդան Գրիգոր Համգա Պահլավունու աղջիկն է, քույր Վահրամ սպարապետի և հորաքույր Գր. Մագիստրոսի: Վաղամեոիկ եղավ և նրա մյուս եղբայրը՝ Ապղարիս Հայոց մարդպանը շինեց նրա գերեզմանը 1040 թ. (Շիրակ 53, Աղգապատում 1154): Այնուհետև հիշվում են Սեդայ կամ Սեդայ՝ դուստր Գագիկ Ապուրուհան Արծրունու (Ժ դար, Արծր. Գ. ԻԲ, ԻԴ, ԻԵ, ԻԹ. Սուտ—Շապհ. 64), Սեդա դուստր Պարսիմոյ Օշականցու (1210 թ. Շիրակ 117), Սեդա՝ կին Առիւծի (1277 թ. Շիրակ 25) Սեբա խաթուն (1606 թ. Սիսական 109) ևն:

Շատերը հարցրել են ինձ Սեդա անվան ծագումը. բայց անձանոթ էր ինձ. ոմանք մեկնում էին seda բառով, որ նշանակում է «ձայն»: Այս մեկնությունը, որ տված պիտի լինի մի տաճկահայ անձ, բոլորովին անճիշտ է. Այդ seda «ձայն» բառը, որ տաճկերենում գործածական ձև է, իսկապես արար. sedā բառն է, որ եթե հայերենի անցներ, պիտի դառնար ծաղա: (Արար. Ե տալիս է հյ. ծ):

Այնուհետև տարիներ մտածել եմ այս անվան ծագման մասին և ոչ մի լուծում չեմ կարողացել տալ:

Հաճախ պատահել է ինձ, որ երբ մի բառի ծագումը որոնել եմ և չեմ գտել, միտքս ինձանից անկախ աշխատել է և մի օր էլ հանկարծ պատասխանը թելադրել է ինձ:

Այսպես եղավ նաև այս դեպքում:

Անցյալ տարի, հունիսի 22-ին Մոսկվայից Լենինգրադ գնալու ժամանակ, այդ ձևով ինձ հաջողվեց գտնել Սեդա բառի ծագումը:

Դա արար. Seyid «տեր բառի իդականն է, որ կարող է ունենալ երկու ձև՝ Seyida կամ Seyidat: Մեր Սեդա բառը ծագում է առաջինից և է իսկապես Սեյդա: Երկրորդը գործածական է այժմ արարների մոտգրական ձևով ասվում է Seyidet «տիրուհի»: Առաջին դեմքի ստացական հո-

գով լինում է سیدی Seyidetī «տիրուհի», سیدی yō Seyidetī «ով իմ տիրուհի»։ ժողովրդական լեզվով նույն բառը դարձել է سى Sitti «տիկին», որ այժմ բնգնաձևեր գործածական է եզրագրության և Ասորիքում։ Այս բառն է, որ հայերեն էլ դարձել է սթի, սիթի՝ մի խումբ իգական անունների մեջ։ Ինչ։ Սիթի խաթուն, Սիթիքուլի (=հյ. Ամենտիկին), Աթրիքուլ, Մըթըլումամ ևն (ԺԴ.—ԺԸ դար)։

Հասնելով Լենինգրադ, իմ այդ գյուտը հաղորդեցի Ակադ. Հ. Ա. Օրբելիին, որ լիովին համաձայնեց ինձ հետ և ավելացրեց, թե արձանագրության մեջ հաճախ գրվում է Ալյդա և կամ Սէդա, ուր է տառի պոչը գոնե ձևապես պահում է յ տառի հետքը։

39. ԱՌԱՏԻԿ

Հայերենի ամենաանսովոր բառերից մեկն է, բայց շատ հին։ ուղղակի և դարի առաջին կեսից։ Դործածված է մի անգամ Ագաթանգեղոսի մեջ հոգնակի գրծ. առատկօք ձևով, նույնը Յհ. կթղ. 300 և մի անգամ էլ հոգ. սեռ. առատկաց ձևով Յհ. կթղ. 312։ Նշանակում է «առասան կամ չվան, որով հանցավորի ոտքերն ու գլուխը պրկում էին գելարանի մեջ»։ Ուղղական ձևը չէ ավանդված։ պիտի լինե՞ր առատիկ կամ առատուկ։

Առնում եմ առատիկ ձևը, որ ինձ ավելի հավանական է թվում։

Առ կամ թռա նախդիրով կազմված մի քանի լավ բառեր ունենք, որոնցից հիշենք հատկապես առասպել <առա+ հիմնալեզվի spel «խոսիլ, պատմել» և առաստաղ <առա+ նիս stel «դնել, գետեղել, բարձրացնել, կանգնեցնել, ցրց, սյուն, հենարան» (սրանց վրա ավելի մանրամասն տես Արմ. բո. հտ. է, էջ 90—91)։

Վերահիշյալ առատիկ բառն էլ կազմված է ճիշտ նույն ձևով առա նախդիրով + տի «կապ, կապել» արմատից, որ գտնում ենք նաև սամետի, կալոտի, գվռ. ոռտեն, ոռտիք, վգտա բառերի մեջ. այն է հիմնալեզվի de «կապել», հուն. ծեռ ևն (տես Արմ. բո. Զ. 892)։ Վերջահար-իկ ծանոթ նվազական մասնիկն է։

Իսկ եթե բառի ձևն է առատուկ, ամեն ինչ կմնա նույնը, միայն վերջահար մասնիկը կլինի - ուկ, որի համար իբրև օրինակ ունենք աղս-ուկ = հուն. pōlemon արմուկն հիմնալեզվի arm ևն։

40. ԷՋ, ԻՋԱՆԵԼ

Հայերենի չմեկնված արմատներից է։ Նույն է ռուս. ИДИ «արի, գնա», ИТТИ «գալ, գնալ» բայերի հետ, որոնք ղանազան նախամասնիկներով պառնում են сойду, сойти, հսլ. sən-iti «հիշել», սերբ. іди «երթալ» siđi «հիշել» ևն։ Այս բոլորը ծագում են հիմնալեզվի eii «երթալ» արմատից՝ d, dh աճականով, որ ավելի լավ ցույց է տալիս հսլ. jadq «երթալ (ձիով)»։ հմմտ. լտ. eo ire, հուն. εἶμι, ἔμειν սանսկ. emi, imas, <հիմնալեզվի eimi, imes, ienti (Berneker 421, 442)։

Հայերենի մեջ, ճիշտ սլավականին նման, պարզ արմատը չէ պահված իր չափազանց կարճ թյան պատճառով. կա միայն d, dh աճականով կազմված ձևը՝ բարձր աստիճանի ei ձայն դարձից, որ տալիս է «է» (էջ)։ Ըստ այսմ հյ. իջի ճիշտ նույնն է ռուս. ИДИ ձևի հետ։

Իմաստի տարբերությունը համար հետաքրքիր է հիշել, որ Կուսգետի մեջ (Մոսկան) իջանել բայը (իջվիլ) նշանակում է «երթալ», որովհետև

տղմուն, քսուն կամ իմուն հոմանիշները, որոնք կազմված են ա ձայնավորը ոնգականի մոտ փերածելով օ կամ ու:

Նման > մալ ձայնափոխությունը հիշեցնում է մեկ քրդերենի էլ mal «տուն» բառի ծագումը: Սրա նախաձևն է հիմնադրվի dom (ռուս. дом, լատ. domus, հյ. տուն), որ արիական ճյուղում դարձել է dam, հին գնդ. dāmana, զնդ. nmana, սանս. mana և քրդ. mal, բոլորն էլ «տուն»:

Երկու դեպքումն էլ (հայերեն և քրդերեն) ո>լ ձայնափոխությունը տարանմանության արդյունք է:

44. Ը Թ Ը Հ Ե Լ

Հարաբարի բարբառում սովորական դարձված է ըռնելիք քաշի զգնա, հեռացիր», որ գործածական է նաև Զանգեզուր և Մեղրի: Իբրև առանձին բառ գոյություն չունի և գործածողներն էլ չգիտեն թե ինչ է նշանակում:

Ըստ իս արաբ. راحل rahl արմատից է, որին պատկանող բառերը հետևյալներն են. راحل rahūl «մեկի ունեցած շորերը և այլ իրերը», راحل rahl կամ راحل rahil «մեկ իջևանից մյուս իջևանը շփել, քոչ», راحل rahil «մի տեղից քոչող մարդ» ևն (տես Կամուս, հատ. Բ., էջ 222): Ըստ այսմ ըռնել նշանակում է «ճամբորդության ժամանակ իր հետ վերցրած զանազան իրերը» և ըռնելիք քաշի նույն է՝ ինչ որ «փաստափուսադ հավաքի» (ու վեր կաց գնա):

45. Շ Մ Ա Թ

Սա մի նորագյուտ բառ է՝ «կրժկալ, գոգնոց» նշանակությամբ, որ գտնում եմ գործածված Դուշակի մոտ երեք անգամ, էջ 53, 75: Իմ Արմ. բառ. հտ. Ե, էջ 380 խոսում եմ այս բառի մասին և կցում եմ պրս. šamad «սփռոց» բառին՝ Թեհրանի պարսիկ բարբառով: Սրա ծագումը այն ժամանակ ինձ հայտնի չէր: Այժմ Կամուսի մեջ, հտ. Բ, էջ 483 գտնում եմ արաբ. سمت simat «սփռոցի վրա երկար շարված կերակուրներ» (հանում է արաբ. سمت smt «շարել» արմատից): Միևնույն ժամանակ մի արաբերեն դասագրքում գտնում եմ պարզապես سمت simat «Tischtuch» «սփռոց» (տես Harder, Arab. Conv. Gram. Heidelberg 1898, էջ 145):

46. Ձ Ե Ղ Ո Ի Ն

Արմ. բառ. Դ. 480 ասում եմ թե հյ. ձեզուն պատահական նմանություն միայն ունի վրաց. ձելի «գերան» բառի հետ (Չուբինով², 1614): Այժմ կարծում եմ, որ այս երկու բառերը կապ ունեն իրար հետ և ձեզուն բառը կազմված է ձեղ «գերան» արմատից՝ ուն մասնիկով:

Երկու տեսակ ուն մասնիկ կամ վերջավորություն կա. առաջինը այն սովորական— ուն մասնիկն է, որ կազմում է ածական. ինչ. քոչուն, շարժուն, անասուն ևն. սրանք որոշվում են իրենց սեռական— ոյ ձևով. ինչ. քոչնոյ, անասնոյ ևն:

Երկրորդը այն վերջավորությունն է, որ գտնում ենք որոշ արմատական բառերի ծայրին. ինչ. տուն, շուն, անուն, ձեզուն, տտուն, սրուն և գուցե ուրիշներ էլ: Սրանք էլ վերածվում են երկու խմբի. տուն և շուն սեռականում լինում են տան, շան, իսկ անուն, ձեզուն, որուն լինում են անուան, ձեզուան, սրուան: Այս վերջին երկու բառերի շատ անկանոն սեռականը կա-

նոնավոր ձև կստանա, երբոր մտածենք թե նրանց ուղղականը եղել է անուան (<հիմնալեզվի anōmn) և՛ ձեղումն, որով սեռ. *անուան, *ձեղումն, ապա ու-ի սովորական կորուստով անւան, ձեղւան = անուան, ձեղումն, ճիշտ ինչպես ունենք տուն, շուն սեռ. *տումն, *շումն, ապա ու-ի կորուստով տան, շան:

Առաջին *անումն, <հիմնալեզվի anōmn ձևը ցույց է տալիս, որ ընդհանուր է մ-ից, ինչպես դտնում ենք նաև պաշտումն — սեռ. պաշտաման և մրջիմն — մրջին ձևերի մեջ: Սրանք հայերենի ամենահին խավերի բառերն են, որոնց հետ պիտի միանա նաև այժմ ձեղումն, իր հնագույն *ձեղումն ձևով:

Այս իմաստով երեք հոմանիշ ունենք հայերենում. առաստաղ, առիք, ձեղումն, որոնք իհարկե ցույց են տալիս առաստաղի տարրեր ճարտարապետական ձևեր (Մի կողմ եմ թողնում անառ = ոնառ բառը, որ երևի միայն «գերան» էր նշանակում): Վերոհիշյալ երեք բառերից առաջինը զուտ հնդեվրոպական է և կցվում է ոտոս. столб «սյուն» стель «սենյակի ծածփ» բառերին (առ նախդիրով հիմնալեզվի stel արմատից. տես Արմ. բո. հտ. է, էջ 91): Երկրորդը բոլորովին անհայտ է. երրորդը (ձեղումն) պահում է մեզ վարանոտ զբոլթյան մեջ: Արմատը դանդում է միայն վրացերենում և որքան պիտի՝ չկա մյուս ցեղակից լեզուների մեջ: մյուս կողմից հայերենը իրեն բնիկ մեկնված չէ: Այս զբոլթյան մեջ անհնար է որոշել, թե այս երկուսից որն է փոխառյալ: Եվ այդպես էլ կմնա մինչև այն օրը, երբ կունենանք վրացերենի արմատական բառարանը և Կովկասյան լեզուների համեմատական քերականությունը:

47. ՀԱՅԵՁԵՆ

1480 թվին գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Ի թաղաւորութեանն Աղուպին, զի շատ փորձութիւն և նեղութիւն և վիշա հասոյց քրիստոնեայ ազգին... և զհայ եղեն միսն խափանեց և զմեռեալն ի ցած ասաց տանուլ» (տես Յուդակ հայերեն ձեռագրաց հալէպի, Երուսաղեմ 1935, էջ 68 ա):

Ջհայ եղեն միսն, որ ոչ մի իմաստ չունի, բնականաբար հրատարակչի սխալ ընթերցման արդյունքն է. պետք է կարդալ «զհայեցին միսն» և հասկանալ «հայի կամ քրիստոնյայի մորթած միսը», այն, ինչ որ այժմ Ղարաբաղի բարբառով կոչվում է հայամորթ և որ ճաթեացին գրում է հայգին:

48. ՏՈՒ

Ախտայի բարբառում գործածական է այս բառը՝ «վիզ» նշանակությամբ: Ոճով ասվում է «տոռը լցվել է. տոռը հաստացրել է» (վիզը լցվել է, վիզը հաստացրել): Երբ առանձին բառ չի գործածվում: (Այս տեղեկությունը հաղորդեց կինս՝ Սոֆիա Աճառյան):

Ըստ իս լա dorsum «մեջք, թիկունք, կոնակ» բառն է:

Այս լատին բառը մեկնված է զանազան ձևերով. որոնք բոլորը մերժում է Walde 243 և բնդունում է ըստ Breal-ի առաջարկությամբ deorsum «ցած, դեպի վայր» բառից «հավանաբար» Ernout—Meillet բառարանում էլ (էջ 272) ասվում է, թե «սրանից ավելի լավ բացատրություն չի տրված», իրր թե թիկունքը մարմնի այն մասն է, որ վերևից դեպի ցած է թեքվում (deorsum dictum quod pars ea corporis devexa sit deorsum):

Հյ. Ռ համապատասխանելով հիմնադրված ռՏ ձայնախմբին, այս երկ : բա-
ռերը (տոռ = dorsum) բոլորովին նույնանում են իրար հետ։ Մնում է միայն
իմաստի տարբերությունը (վիզ և թիկունք)։ Բայց հայտնի է, թե որքան
շարժական են մտքի մասերի նշանակությունները։ Լավագույն օրինակն
է պրս. ջիգար, որ թե թոքն է և թե լերդը։ Բայց հատկապես այս իմաստի
համար հիշում եմ հյ. շլիմք (հինը շլմի), որ թեև ամեն տեղ «վիզ» իմաստն
ունի, բայց համընդուն ստացել է «ղեմք» նշանակությունը և բուլանը-
յում «ծոծրակի տակը՝ վզի ներքևի մասը», որ արդեն թիկունքն է (տես
Արմ. բառ. հտ. Ե, էջ 371)։

49. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԸ

Անանիա Շիրակացին (կամ Շիրակունին) իր գանազան մանր աշխա-
տությունների շարքում տալիս է նաև 16 գանազան ազգերի ամսանուն-
ները։ Այս բոլորը հրատարակել է պրոֆ.-դր. Աշոտ Արրահամյանը (Շիրա-
կացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 116 — 122)։

Խնդրել էի պրոֆ.-դր. Էդիկ Աղայանից ուսումնասիրել Աղուանից
ամսանունները՝ համեմատելով արդի Ուտիացոց լեզվի հետ։ Հաջողությամբ
կատարեց նա այս աշխատությունը՝ ընկ. Պատվական Դուրմանյանի աջակ-
ցությամբ։

Այստեղ ես քննության եմ առնում մի քանի ուրիշ ժողովուրդների
ամսանունները։

Նախ առնում եմ Մակեդոնացոց ամսանունները։

Մակեդոնացոց լեզվական ամեն տեսակ մնացորդների համար առան-
ձին ուսումնասիրություն ունի Hoffmann, die Makedonen, Göttingen, 1906։

Այստեղ էջ 101 դառնում ենք Մակեդոնացոց 12 ամսանունները։ Բաց
ենք անում Շիրակացու մատեն. էջ 121 «Ամիսք մակեդոնացւոց» և ու մեկը
չի համապատասխանում Hoffmann -ի տված անուններին։ Այս վերջինները
դառնում ենք Շիրակացու մոտ, էջ 119, «Ամիսք յունաց» վերնագրի տակ։
Տալիս եմ այստեղ երկուսի ցուցակը՝ համեմատության համար։

Hoffmann
Մակեդոնական ամիսներ

Շիրակացի
ամիսը յունաց

Διος
Ἀπελλαιος
Ἀύθναιος
Περσιος
Δύστρος
Ξανθικός
Αρτεμισιος
Δαίσιος
Παναρτος
Λωιος
Ἰορπειος
Ἰπερβερεταιος

Դիոս
Ազիզդիոս
Դեմետրոս
Պերիոս
Դստրիոս
Դսանքիսոս
Արտեմիսիոս
Դեսեսոս
Պենթոս
Ղևոս
Դորպեսոս
Հիպատիոս

Համեմատության մեջ ուր որ սխալներ կան, տպված է շեղատառ.
 Հրատարակիչը 119-րդ էջի վերջում ծանոթագրում է, թե «Հայկական
 ՍՍՌ Մատեն. Խ 1973 գրչագրում ասորացի և չուճացի ամիսներից մասամբ
 տարրերվում են վերևում, ծանոթագրության համար համարակալված, չու-
 տեյալ ամիսների անունները». Նույն այս տեղեկությունը դրված է նաև
 120-րդ էջի վերևում. և իրոք «ասորացի և չուճացի» ամիսների մեջ ծանո-
 թության համար համարակալված են 1—13, որից 1—7 ասորացի ամիսների
 համար և 8—13 մակեդոնական ամիսների համար. 'Իժոախտարար լոոս-
 տացված տարրերակները ոչ նույն էջում և ոչ էլ նախորդ և հաջորդ էջե-
 րում չեն հրատարակված. կարևոր էր սակայն այդ, որովհետև նրանով
 պիտի իմանայինք, թե արդյոք Խ 1973 ձեռագրի ընթերցվածները ավելի
 լավ չէին և պետք չէր արդյոք դրանք գնել ընագրում, ինչ որոշելը իմ
 հիմնական նպատակն էր:

Արարական ամսանունները դրված են երկու տնպամ, առաջինը «Ամիսք
 տաճկաց» վերնագրով (էջ 121), երկրորդը «Ամիսք արապկաց» վերնագրով
 (էջ 122):

Այս երկուսը դնում եմ իրար դեմ.

Ա	Բ
Մաւհալամ	Մուհամառ
Ասփար	Սաֆար
Ռապիաւալ	Ռապիաւալ
Ռագիախր	Ռապիախիր
Ջամագիաւալ	Ճմէտաւաւալ
Ջամագիախր	Ճմէտաւախիր
Ռաջապ	Ռաջար
Շահյաան	Շալաան
Ռտնագան	Ռամադան
Ջաւալ	Շաւալ
Ջղաւ	Տիլդալաս
Ջղթաւ	Տէլհիճա

Երկուսն էլ սխալաշատ. երկրորդը առաջինից մի քիչ ավելի լավ է. աղա-
 վաղումները ցույց տալու համար դնում եմ այստեղ արարերեն ամսանուն-
 ները տառադարձությամբ հանդերձ.

محرم	muharram
سفر	safar
ربيع الاول	rabī' -ul-avval
ربيع الاخر	rabī' -ul-axir
جمادى الاول	jamaḍi-nl-avval
جمادى الاخر	lamaḍi-ul-axir
رجب	rajab
شعبان	ša'ban
رمضان	ramazan
شوال	šavval
ذی القعدة	Zilqa'da
ذی الحجة	Zilhijja

Վրացական ամիսներն էլ երկու տեսակ են. սրանք էլ ղնում եմ ղեմ առ ղեմ (Ա և Բ), համեմատության ղնելով նաև (Գ) իսկական վրացական ամսանունները, որ հաղորդեց ինձ վրացի գիտնական պրոֆ. Աբուլաձեն՝ քաղելով Օրբելիանի բառարանից, հրատ. 1928, էջ 139.

Ա	Բ	Գ
Ախլձևի	Ախալձերի	Ախալձիսա
Սիթիլի	Սթիլի	Սթուլիսա
Տիրիսթի	Տիրիսդին	Տիրիսկոնիսա
Տիրիսդենի	Տիրիսդինի	Տիրիսդենի
Ապանի	Ապանի	Աբանի
Նուկնի	Նուկնի	Սուրժոունիսի
Սիկրանի	Մեկրանի	Միրկանի
Իգրակա	Իգրիկա	Իգրիկա
Վարդոսպ	Վարդոպա	Վարդորիսա
Մարիլի	Տրելի	Մարիալիսա
Դուրա	Դուրա	Թիբիսա
Դուրալուրա	Դուրաբալուրա	Դվելթորիսա

Որովհետև անըմբռնելի է տեսնել այսչափ ականալից սխալներ նույնիսկ մեր հարևան լեզուների ամսանունների մեջ (արաբերեն և մանավանդ վրացերեն), ուստի իրավացի ենք գտնում պրոֆ. Աբրահամյանի այն եղբակացու թյունը, թե ժայտ ամիսների անուններից որոշ ցանկեր, հատկապես արաբականը, մեր կարծիքով, մտցրված է տեքստի մեջ հետապալում (Շիրակացու մատ., էջ 122):

50. Ա Հ Ե Ա Կ

Ահեակ ժախճ բառի ծագման մասին խոսելով Hübschmann. Arm. Gram. էջ 414, համեմատության է առնում սանս. savya և գնդ. havya հոմանիշները: Իր կարծիքով այս երկու բառերի և հայերեն բառի միջև կապ չկա: Որովհետև եթե ահեակ բնիկ լիներ՝ savya ձևի դեմ պիտի ունենար հեգի կամ եգի ձևը, ինչպես սանս. gavya ձևի դեմ գտնում ենք հյ. կուզի լեկարագ: Բայց նաև չի կարող փոխառյալ լինել, որովհետև պիլ hoï, havik շատ հեռու են հայերենից:

Նույնը փոխ առնելով ես իմ Արմ. բռ. Ա. 103 ահեակ բառի ծագումը գրել եմ անհայտ:

Այն ժամանակ, երբ հրատարակվեց Hübsch. Arm. Gram. (1897), ղեռ ծանոթ չէր երևի պիլ. hoyak ժախճ ձևը, որ գտնում ենք Bartholomae, Altir, Wort., (հրատ. 1904 թ.) գնդ. haoya հոմանիշի դեմ:

Հայերենում—ակ վերջացող բառերը ընդհանրապես մեկնված են իբր իրանական փոխառություն: Վրացի հայագետ պրոֆ. Ի. Աբուլաձեն ցույց տվեց ղղեակ բառի բացատրությամբ, որ—եակ վերջացող բառերն էլ կասկածելի են: Պիլ. hōyak ժախճ բառը այնքան նման է հյ. ահեակ հոմանիշին, որ անհնարին է մերժել նրանց կապը: Տարբերությունը միայն առաջաձայնի մեջ է, որ կարող է առաջացած լինել մեղ անծանոթ հյուսիսային—արևմտյան պաշլավ ձևի միջոցով, և կամ հյ. աջ բառի առաջաձայնի ազդեցությամբ:

51. Ա Ռ Ա Ք Ի Ն Ի

Այս բառի նախնական իմաստն է *սկտրիճ, քաճ*, որը դարձավ *քա-րեպաշտ*, *բարեգործ*։ Են դարում ղեռ այս երկու իմաստներն էլ գործածական են, մինչև որ հոգեկանը գերազանցում է և այսօր առաքիկի ասելով հասկանում ենք միայն *քարեպաշտ*։ Հին իմաստի լավագույն օրինակներից են. Ի մէջ պատերազմի երեկոյայց առաքինի (Իմ. Բ. 15), Հսելով զառաքինեացն՝ զքաջութիւն (Եղիշ.) վասն հայոց պատերազմին, յորում բազումք առաքինացան՝ քան թէ սակաւք. Ծորում սուպարիսի նախ ինքն առաքինացաւ (Եղիշ.) Սամփսոն իշու ոսկերովքն առաքինացաւ (մեծ քաջություններ գործեց) (Եփր. զևտ.)։

Սա ամենալավ օրինակներից մեկն է իմաստաբանության մեջ՝ ցույց տալու համար թե արմատների իմաստը նախ նյութականն է, ապա միայն անցնում է բարոյականին ու վերացականին։

Բառի ծագումը անհայտ է. զանազան ստուգարանական փորձեր տես իմ Արմ. Բո. Ա. 507—8, բոլորն էլ մերժված։

Նախ պարզ է, որ բառի ի վերջավորությունը ածական կազմող մասնիկն է. ինչ. բար-ի, աղ-ի, երկաթ-ի, արծաթ-ի, մեծագն-ի և հատկապես ցերքն-ի որի մեջ զարմանալի կերպով չէ ջնջված անշեշտ ի ձայնավորը (փոխանակ լինելու ցերքնի)։

Այլուստ գիտենք, որ առաջնակարգությամբ սկսող բառերի մեջ առաջնություն է. այսպես են հատկապես առասպել, սոսստաղ, առատիկ։ Այսպես է նաև առաքինի, որով նրա արմատական մասը մնում է քին։

Ըստ ձայնական օրենքների հյ. ք առաջանում է sw-ից և ի ձայնավորը ռնգականից առաջ՝ առաջանում է e ձայնավորից։ Ըստ այսմ հասնում ենք նախավոր swen-արմատին։ Այսպիսի արմատ չկա, բայց ունենք swento, suntō շաշխույժ, կորովի, առողջ՝ արմատը, որ պահված է հետևյալ ձևերով. — գոթ. swinþs ռուժեղ, զորավոր, առողջ, հիսլ. svinnr շարագ, ուժեղ, խելոք, անզոք. swiþ ռուժեղ, զորավոր, հին սաքս. swith զորավոր, կատաղի, քաջ մեզ. swint ճշգրտ, ուժեղ, կատաղի, արագ, կատաղած, նրգ. geschwind շարագ, հրգ. gisunt շառողջ, հին սաքս. gisund շանաղարտ, առողջ, հին ֆրիզ. sund թթարմ, անեղծ, առողջ (Walde-Pokorny, II, էջ 525)։

Բառավերջում ո-ին հաջորդող խուլ առաջնականը (t) ջնջվում է հայերենում. այս երևույթի լավագույն օրինակներն են՝ քսան wiknti, հուն. <pont, խոնարհման մեջ՝ հոգնակի ց ղեմքի բայերի ահագին շարքը (էն, բերեն, ուտեն, ևն)։ Ինչպես նաև երեսուն, քառասուն, յիսուն... իննսուն շարքը, որոնց բոլորի վերջավորությունն է-սուն K'ontə.

52. ՄԵԾՈՓ, ՈՄՈՓ

Թուրքա Մեծօփեցու հայրենիքն է Մեծօփ, որ գտնվում է Վասպուրականում։ Այս բառի ստուգարանությունը շատ պարզ է. հին հայերեն ոփ նշանակում է *սփոս կամ խոռոչ*, որի մեջ ջուր է հավաքվում. կենդանի է մինչև այժմ Մուշ, Շատախ, Չենկիլեր օփ ձևով սփոքրիկ լճակ, լճացած ջուր՝ իմաստով. նույնը Խիանում դառնում է հուր, որից էլ Մուշ՝ օփոնել թջուրը լճանալով հոսել՝ (տես Արմ. Բո. հտ. Ե, 711—2)։

Ըստ այսմ Մեծոփ զառնում է մի մեծ փոս կամ խոռոչ, որի մեջ ցուր է հավաքվել:

Սրան նման է Օծուպ, Լեծոփ, Օծուպի զիւղ, որը գտնվում է Նախիջևանի մոտ, ուր կա նաև Օծուպի վանքը: Այս տեղից էր Վրթանես Օծուպեցին (կամ Ոծուպեցի), որ Աղթամարից զողացավ լուսավորչի աջը և դարձրեց էջմիածնի վանքին (տես Սիսական 480, 483):

Օծուպ պիտի լինի *Օծուփ և պետք է նշանակե լճակ, որի մեջ օձ է բնակվում:

Վաղարշավանի մոտ կա այժմ Օփուկ անունով մի գյուղ, որտեղից տտպահամ ե երկաթախառն հանքաջուր է բխում (Այրարատ 2): Եթե հանքաջուր է բխում, ուրեմն ամենայն հնչողությամբ կարող ենք Օփուկը մեկնել իրրև փոքրիկ ու կամ խոռոչ:

Երբ Աղաղեմիայի միացյալ ժողովների առթիվ Վրաստան էինք գնում, գնացքում ակադ. Ղափանցյանին հայտնեցի Մեծոփ և Օծուփ գյուղերի մասին. նա սրանց ավելացրեց մի երրորդ տեղանուն: Բր դասախոսությունն մեջ նա այս բոլորը միացրեց վրացական ուրիշ տեղանունների հետ և մեկնեց ընդհանուր Ասիական արմատներով:

53. ԴԱՐՁՅԱԼ ԵՎԱՂՏՆԻՔ ԿԱՆԱՆՑ

Ըմ ոչ մի բանասիրական ենթադրությունը այնքան շուտ ե այնքան ճիշտ ստուգված չի եղել, ինչպես եղան իմ ենթադրությունները Երազմանիք կանանց անհայտ գրքի մասին:

Հաղիվ մի ամիս անցել էր իմ հոգվածի հրատարակությունից, երբ թ. Ի. Հարությունյանը մատենադարանում գտնում է Երազմանիք կանանց գրքի ձեռագիրը, իմ Լեոնիդագրում եղած մամանակ:

Նորագյուտ ձեռագիրը կրում է № 4807 համարը. գրված է 1795 թ. թշկական գրվածքների ժողովածու է տարբեր գրիչներից: Նրանց մեջ անջատ մաս է կաղմում Դադունիք կանանցը, որ գրվում է 381—402 էջերը: Այս մասը տարբերվում է մյուսներից հատկապես նրանով, որ երկսյուն է, մինչ մյուսները միասյուն են: Երբ ավելի հնաձև նոտրադիր է, ուստի կարող է և պետք է 1795 թվից հին լինի:

Վերնագիրն է Երիք որ կոչի Դադունի գաղտնեաց. Արարեալ մեծին Ալպերտի յաղագս գաղտնեաց կանանց: Սրանից հետո գրվում է նախ Երան առ ընթերցող սիրելին, որ մեր նախորդ հոգվածում հիշատակված նամակն է:

Նամակից հետո առանձին վերնագրով սկսում է Երիք առաջին, որին հետևում են Եպրակն անունով 11 հոգվածներ, որոնք համապատասխանում են իրենց վերնագրով և իրենց բովանդակությամբ մեր հիշատակած Ա—ԺԱ հոգվածներին (պակասում են մեր ԺԲ և ԺԳ հոգվածները):

Այս 11 գլուխներից (պրակներից) հետո սկսում է Երազմանիք իւաց բնականաց որք երեին ի ծնունդս մարդկան. ունի 8 պրակ, որի վերջում գրված է Եթէ կամիս տես ի դիրս գաղտնեացն Ալպերտոսի: Սրա վերջումն էլ գրված է Վախճան առաջին գրողն:

Այստեղ վերջանում է գրվածքը, հետևում են երեք պարապ թերթ, որից հետո սկսվում է այլ նյութ, այլ ձեռագրով:

Այն ենթադրությունները, որ ես արել էի իմ նախորդ հոդվածում և որոնք ստուգվեցին ներկա ձեռագրի գյուտով, հետեյալներն են.

1. Պոլսում, 1876 թվին հրատարակված «Գաղտնիք կանանց» վերնագրով գրքույկը, որի հեղինակը անհայտ է պահում իր անունը, կեղծիք չէ՝ ինչպես կարծում էին ոմանք:

2. Նրա բնագիրը պետք է եղած լինի գրարար, որից թարգմանել է անանուն հրատարակչը:

3. Նա միջնադարյան հայերենով չէ. ես գրել էի «վճռականապես ոչ», հիմնվելով նրա ղանազան հետքերի վրա, որոնք հնագույն հայ լեզվին են պատկանում:

4. Դրքի սկիզբը դրված նամակը կամ ընծայականն էլ ոչ կեղծիք է և ոչ հետին հավելված. նա պատկանում է առաջին հեղինակի գրչին:

5. Եթե այն ձեռագիրը, որից թարգմանել է հեղինակը, իր ասելով ժեղարից է, բուն բնագիրը ժեղարից ավելի առաջ է. ես համարում եմ ժԲ ղարից:

Նոր ձեռագրի հայտնությունից այս բոլորը ստուգված է:

Բայց նոր ձեռագիրը տալիս է մեզ նորանոր այլ հայտնություններ:

Ձեռագիրը իրրե հեղինակ հիշում է «Մեծն Ալպերտոսին»:

Այս անունով հայտնի է Albert le Grand, դոմինիկյան արևդու, աստվածաբան, փիլիսոփա, ալքիմիստ, ծնված 1193 թ. և մեռած Կոլոնիայում 1280 թվին: Դրել է ի միջի այլոց կանանց վերաբերյալ բժշկական մի գրվածք, որի մասին ոչ մի տեղեկություն չունեմ:

Դարելի չէ, որ մի գիրք ունենա Ա մաս, մի քանի գլուխներով և այլևս Բ մաս չունենա: Ուստի ձեռագիրը կիսատ է, ինչպես որ կիսատ է նաև 1876 թվի տպագրությունը:

Տարակույս չկա, որ հայերենը թարգմանված է լատիներենից. բայց առդյոք գուտ թարգմանություն է թե խմբագրություն: Պոլսի հրատարակությունը գիրքը համարում է «Յովհաննես անուն հայ արքեպիսկոպոսն մը յօրինելալ»։ ով է այս արքեպիսկոպոսը և ինչից գիտե, որ հայ է. այս մասին եթե որեւէ տեղեկություն կտր հրատարակչի տեսած ձեռագրում, մեզ հայտնի չէ: Այս բոլորը պարզելու համար անհրաժեշտ է նախ ունենալ Ալբերտոսի վերոհիշյալ աշխատությունը:

Համենայն դեպս գիրքը գրված չէ ժԲ ղարում, ինչպես մենք ենթադրել էինք. այլ մի քիչ նրանից ուշ, ժԳ գարու կեսին:

Այժմ տեսնենք, թե ինչ համեմատություն կա ներկա ձեռագրի և 1876 թվի հրատարակության մեջ:

Ընդհանրապես երկուսը միևնույն են. այն գրարար ձևերը, որ ես հավաքել էի հրատարակությունից՝ կան նաև ձեռագրում, քիչ տարբերությամբ: Այսպես՝

1. Էջ 1, տող 20, հրատ. որպիսութիւն, ձեռ. սրականքիւն:

2. Էջ 1, տող 3 (տակից), հրատ. Յետ այնորիկ կը սկսի մածնուլ, այսինքն թահձրանալ և պնդիլ մինչև յղացման երկոտասաներորդ օրը: Ձեռ. յետոյ սկսանի մածիլ և պնդիլ մինչև ցաւուրս երկոտասան:

3. Էջ 2, տող 12, հրատ. «...կրնե ծնունդը խոտապարանոց»։ Ձեռ. առնե րղիստապարանոց (ձեռ. մի բառ պակաս է և անիմաստ, դրել է նախգիրը ըզ, բայց փախցրել է ծնունդն):

4. էջ 3, տող 8, հրատ. «աշուրները փարփար» ձևո. դասն մեծամեծս.
5. էջ 4, տող 1, հրատ. անյարմար պաշտամանց. նույն է նաև ձևո.
6. էջ 4, տող 3 (տակից), «կանաչածնաց մեջ» = ձևո. ի ծնունդս կեն-

դանեաց:

7. էջ 8, տող 1, հրատ. անկին վրայ = ձևո. ի ձախակողմն.

8. էջ 8, տող 6, հրատ. «ցուրտ զգայ կամ ցավ յովվագոյն մարմնոյն ալեալ կողմերը». ձևո. չեղատու րառի տեղ ունի յովորումն:

9. էջ 9, տող 3 և 4, հրատ. խոժոռ և անմարսական րաներ = ձևո. խոժոռ և անմարսական.

10. էջ 10, տող 12 և 13 դրդալ = ձևո. դդալ:

11. էջ 11, տող 13, հրատ. րմրոնել և պահել, նույնը և ձևո.

12. էջ 12, տող 7, հրատ. ծնանել դաւակ արու, նույնը և ձևո.

Այս 12 կետերի համեմատությունը ցույց է տալիս, որ թեև երկու ձևագրերը նույնն են, բայց 1876-ի հրատարակությունը շատ անգամ ավելի ընտիր է. օր. վերի կետերից՝

1) որպիսություն, 2) մածնուլ, 3) գծնունդն, 4) փարփար, 6) կանաչածնաց, 7) անկին, 10) դրդալ. (Դժվարանում եմ արտահայտվել 8) յովվագոյն — յովորումն ձևերի հանդեպ. Սրանց վրա ավելացնենք հրատ. էջ 16, տող 7 աղծեալ և ապետեալ մսով = ձևո. մսօք աղեցելովք:

Այս բոլորը, մանավանդ վերջինը, րավական են ցույց տալու համար, թե հրատարակվածը ավելի ընտիր և հին օրինակ էր, քան մեր ձևագիրը:

Արտաքին կաղմությամբ երկուսը իրարից մի նշանավոր տարբերություն ունեն: Մինչդեռ հրատարակվածը միահար մի պիտք է 13 գլխի բաժանված, ձևագիրն ունի երկու մաս, որից առաջինը ունի հրատարակվածի 1—11 գլուխները և չկան 12 և 13 գլուխները. Բայց այս երկու գլուխների բովանդակությունը գտնում ենք ձևագրի երկրորդ մասում. Հետաքրքրական է հասկապես հրատարակության մեջ գլուխը, որ ձևագրում հետևյալ ձևով է.

«Սերմն շատանայ ալսոքիւք կերակրովք. ալսինքն չողգամօք, թարմեօք¹ մսօք (կարծեմ փաք քեպապն է), հաւամսօք, խողեղինեօք ործիւք², ձուօք թերախորովիւք, բակլայիւք կոտորեցելովք, քունճիթօք³ կամ դահնովք, երվիշտայիւք, հացիւք թարմեօք¹ (որ է տաք և խառ հաց), և կամ թխագունիւք, պանրօք դերագանցիւք, ոստռիւք, չողոտիւք⁴, ծամսիւք, և մանաւանդ գինւովք քաղցրահամիւք»:

Ման. 1. երեւի ձևագրի գրիչը ինչպես քարմ րառի գրչությունը, նույնպես և իմաստը հի իմացել. հա գիտեր միայն թթածած:

2. Հրատ. էջ 16 ունի «մսով հաւու, խողի և որթոյ». իսկ այստեղ որթոյ դարձել է ործիւք: Դրիչը չիմանալով, որ որթը հորթ է, հասկացել և ուղղել է ործ (արու քեղ):

3. Հրատ. ունի այստեղ ոստմամբ (սխալ գրչություն փխ. ոսպամբ), մի բառ, որ ինքը միակ նշան եղավ ինձ որոշելու գրքի մամանակը, լեզուն և թե նա կեղծիք չէ, այլ հարադատ:

4. Քունճիթ — սուսամ, իսկ դահիլն (— արար ٲٲ tahin) կնճիթն է ծեծած, բայց դեռ քուսպը չհանած և չմաքրած եղբ. այս ձևի տակ գործածական է այժմ էլ Պսխում և ասվում է րահան կամ րահիլն:

5. Շողոտը առանց կճեպի խխունջն է. այժմ էլ Պսխում խխունջը եփե-

լով ուտում են. իսկ շողոտը որոշ հրվանդոթյանց ժամանակ հում կուլ են տալիս:

Այս բոլորը ի նկատի առնելով, կարելի է ենթադրել, որ հրատարակվածը ոչ թե զուտ թարգմանություն է, այլ որոշ խմբագրություն, թերևս այն նույն Յովհաննես արքեպիսկոպոսից: Բայց այս ենթադրությունը կարելի է ստուգել միայն քննելով Ալրերտսի գիրքը:

Այժմ անցնենք այն նորագոյություն բառերին, որ գտել էի հրատարակության մեջ. Ահա այդ բառերը, որոնք կան և ձեռագրում:

1) Ամեզ թիգական անգամ, (Բաղմ. 1898, էջ 323-րդ գրել եմ մի օրէնք, որի համաձայն եթե մի բառ վերջանում է գրադաձայնով և նրանից առաջ կա Ե ձայնը, գրվում է Եձ և ոչ Ե. ինչ. եղէգ, վէգ, տէգ, մէգ, հէգ, սէգ. բացառություն է արեգ. Այստեղ էլ հրատարակված օրինակում բառը ուներ ամեզ ձեր, որ սխալ է, իսկ ձեռագիրն ունի էջ 391-րդ ճշտված ամեգ, իսկ էջ 398-րդ գամէքիս):

2. Ատամնախոտ. ձեռագրում, էջ 393-ա տալիս է ռոդունական, որ այլապես ատամնախոտ ասի կամ սալվիայ. սրանով իմացանք, որ ատամնախոտն է լատ. salvia = ֆրանս. sauge. ողջունականն էլ թարգմանչի սարքածը պիտի լինի՝ լատ. salvia բառը ենթադրելով լատ. salve ռոջոյն բառից: Լատ. salvia բառը սաղվիա տառադարձությամբ գտնում ենք Փեշտիմալձյան բառարանում, ուր մեկնված է մի տեսակ խոտ. տնկ. տիշ օթու. ուրեմն ատամնախոտն էլ թարգմանված է թրք. տիշ օթուից: Սակայն լատ. salvia = ֆրանս. sauge այլուստ գիտենք հյ. գուպայ, որ է թրք. ատա շայի «եղեսպակ»: Տարբերությունը ստուգել բուսաբանների գործն է. Իմ Արմ. բո. հտ. 2. 61 սաղվիա բառի տակ հարց եմ տալիս, թե հնից է առնված այս բառը, թե նորահնար: Ձեռագրի սաղվիա ձեր երկուսի մեջտեղն է:

3. Բշտիկ, հիշված է էջ 391-րդ:

4. Երկամօրոյք թորձեղք, էջ 369-ար:

5. Կարսակայ (խոտը). այստեղ էջ 341-րդ տալիս է սեռ. հ. Եկաթուկայիս, այսինքն խոտին, որ այլապես թառայ տսիս. պետք է ճշտել, թե երկու ձևերից որն է ուղիղ, իսկ թրք. թառայ նշանակում է կոտեմ:

6. Կոնդ ժխոյ. ձեռագրում, էջ 393-ա գրված է սրա փոխարեն սեռ. գոնոյ, որ երևի գոջի ժխոյ բառն է: Հայտնի չէ թե առաջինը ուղիղ է:

8. Շարոյք ժխոսական թաղանթ 391-րդ:

9. Վիժակն, վիժակունս մարմնի ծակոտիքը 394-ա:

10. Փորրափոր ժխորի վարի մասը 397-րդ:

Սրանից դուրս նոր ավելանում է ասողալնիմ ժապողարաշիս, էջ 382-րդ:

Հիշենք նաև գործելի ժածուիս, էջ 390-ա, 399-ա կուտատուկ ժալոշ (ձեռ. սեռ. կատատկան, որ է ապէմկոմէջի), էջ 341-րդ = թրք. ebemgümeysi ժալոշ. malva silvestris, և ոչսայսի ժեղթի վրա պատկիլ 400-ա:

54. ԵՐԱՆԻԿ, ԵՐՋԱՆԻԿ

Այս բառերի դուգորդությունը վստղուց էր դպացված մեր մեջ: Ենթադրում եմ, որ մինչև իսկ Բարսեղ Կեսարացու «Վեցօրէից» գրքի թարգմանիչը գիտեր այդ և, ոստ այդմ էլ, գրել է. «փափկակեաց, բարեկեցիկ, դիւրասնունդ, երանիկ, երջանիկ, չարայօժար և մեղասէր» (Վեցօր. Ե):

Բայց այս բառերի ստուգարանությունն անձանոթ էր, միայն իմ Վրմատական բառարանի մեջ այդ երկուսի արմատը դրել եմ եր:

Այժմ առաջարկում եմ հետևյալ ստուգարանությունը:

Ունենո հնդեվրոպական մի արմատ, այն է prei, prai, pti, որի ժառանգներն են. սանս. priyate զոհանալ, ախորժել, priya սիրելի, ցանկալի, սիրված, հայրս՝ riar զցանկություն, իդձ, կամք, ղնդ. fray տերախ առնել, ուրախացնել, հսլ. prēja զոհ եմ, խնամք նմ տանում, հսլ. և ոռու. приятель տրարեկամ, սիրելի, ոռու. приятный զդուրեկան, հաճելի, գոթ. frijond, հիսլ. froendi, հրդ. Friunt, ղերմ. Freund, հաաքս. Freund. անգլ. friend տրարեկամ, հրդ. fridu, հաաքս. frithu, ղերմ. Friede տերախություն և այլն (Walde, 2, էջ 86—87):

Հիմնադրվի pre արմատը p-ի անկումով պիտի տար հյ.—քի և ե-ի սովորական հավելվածով պիտի դառնար քի (նմտ. երաստան <prk'to, երես <prepsa երևի <prep-, երէդ <preisk'hu, երի <pru, որի ի-ն բառի ծայրը լինելով ընկել է և աճի (կ) մասնիկով ստացվել է երանի(կ): Երջանիկ բառի մեջ չէր կամ աճական է և կամ հիմնադրվի ց-ի օրինական համապատասխանը, ինչպես որջ <olyo, ստերջ <ster, հուն. steira, ջինջ, ջնջել <g'henye:¹

¹ Այս ստուգարանությունը մտածեցի 18-ին նոյեմբերի, 1950 թ. Առաջարկեցինք պրոֆ. էդ. Աղայանին դնել, թե ինչ կլինի ուսերեն ПРИЯТНЫЙ բառի համապատասխան հայերենը: Նա նույնպես զոռավ, որ այդ բառն է երանիկ-երջանիկ: Առաջարկված խնդրի այս ճիշտ լուծումը ցույց է տալիս վերի ստուգարանության ճշտությունը: